

ԱԶԳԱՅԻՆ ՓՈՔՐԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՄՈՒԼԻ
ՍՏԵՂՍՈՒՄՆ ՈՒ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ԱՄՆ-ՈՒՄ

ՄԱՐԻԱՄ ՏԵՐ-ԳՐԻԴՈՐՅԱՆ

ԱՄՆ-ի ազգային փոքրամասնությունների մամուլի ծնունդն անմիջականորեն կապված է երկրի ամբողջ պատմական զարգացման ընթացքում տեղի ունեցած ներգաղթի հետ: 1739 թ., անգլիերեն առաջին լրագրի լույս տեսնելուց 35 տարի անց, Ամերիկայում սկսեցին հրատարակվել այնտեղ ներգաղթած գերմանացիների լրագրերը: Ներգաղթածների առաջին լրագրերի բովանդակությունը խիստ կրոնական էր:

XIX դ. 40-ական թվականներից ԱՄՆ ներգաղթածների կազմում տեղի են ունենում փոփոխություններ. նրանց շարքերում սկսում են գերակշռել Եվրոպայում տեղի ունեցած քաղաքական հետապնդումներից Նոր Աշխարհում ապաստան որոնող մարդիկ: Եվրոպական հեղափոխությունների պարտությունը և կրոնական բախումները ԱՄՆ նեոտեցին Գերմանիայից, Նորվեգիայից, Շվեյցարիայից, Լեհաստանից, Չեխիայից հեռացածներին: Իռլանդիայում ագրարային գերեզնակվածության հետևանքով 1841—1860 թթ. այնտեղից ԱՄՆ ներգաղթեց մոտ 1,7 մլն. մարդ¹: Նույն ժամանակամիջոցում Գերմանիայից ԱՄՆ անցավ ավելի քան 1,3 մլն. մարդ²: Ներգաղթածների սոցիալական կազմում տեղի ունեցող փոփոխությունները նկատելի ազդեցություն գործեցին ներգաղթային մամուլի բովանդակության վրա: Այդ ժամանակաշրջանի ներգաղթողներն իրենց հետ բերում էին քաղաքական ու սոցիալական դանազան պրոբլեմներ, որոնք արտացոլվում էին նրանց լրագրերի էջերում: Քաղաքական ներգաղթի պարբերական հրատարակությունները սկսում են լուսաբանել դասակարգային պայքարի, գիտական սոցիալիզմի գաղափարներ: 1861 թ. Նյու-Յորքում սկսեց հրատարակվել գերմաներեն «Republik der Arbeiter» առաջին սոցիալիստական լրագիրը: 1876—1877 թթ. Հյուսիսային Ամերիկայի սոցիալիստական բանվորական կուսակցության աջակցող 24 լրագրերից 14-ը լույս էին տեսնում գերմաներեն, մեկը չեխերեն, իսկ մեկը լույս էին ընծայում սկանդինավյան երկրներից ներգաղթածները:

Մինչև XIX դ. 80-ական թվականների կեսերը ԱՄՆ կատարված գաղթը ուներ էթնիկական նույն կազմը, ինչ և դարի առաջին կեսին: 1871—1880 թթ. ընթացքում ԱՄՆ է ներգաղթել 2.812.191 մարդ, որի 73,6%-ը՝ Հյուսիսային և Արևմտյան Եվրոպայից³: ԱՄՆ ներգաղթողների մեծ մասը Գերմանիայից և

¹ „Historical Statistics of the United States“ (Immigration. Immigrants by Country of Birth), Washington, 1960.

² Նույն տեղում:

³ „The New Immigration“ (Annals of the American Academy of Political and Social Sciences, IX, 1968. p. 6).

Իռլանդիայից էր, ներգաղթի հոսանքում Գերմանիայից եկածների թվական գերակշռությունն արտահայտվում էր նրանց հրատարակած լրագրերի տեսակարար կշռի մեջ. 1890-ական թվականների սկզբում ԱՄՆ-ում գերմանական լրագրերի թիվը շարունակում էր աճել, 1893 թ. հասնելով իր քանակական գագաթնակետին՝ 796 լրագիր: Այդ նույն ժամանակ ներգաղթածների հրատարակած լրագրերի թիվը 1170 էր⁴:

XIX դ. 90-ական թվականների վերջից նկատվեց գերմանական լրագրերի թվի կրճատման տենդենց, Այսպես, օրինակ, 1917—1920 թթ. ԱՄՆ-ում լույս տեսնող գերմանական լրագրերի թիվը խիստ կրճատվեց՝ 522-ից հասնելով 276-ի⁵, Այդ կրճատումը, սակայն, զուգակցվում էր այն լեզուներով տպագիր օրգանների թվականն անշեղ աճով, որոնք մինչ այդ չէին ներկայացված ԱՄՆ-ի ազգային փոքրամասնությունների մամուլում:

XIX և XX դարերի յաճաճանագծում ԱՄՆ կատարվող ներգաղթի հոսանքում տեղի ունեցան արմատական փոփոխություններ: 1880—1891 թթ. ԱՄՆ ներգաղթողների քանակը շեշտակի աճեց, Այդ տարիներին ԱՄՆ եկան ավելի քան 5,2 մլն. վերաբնակիչներ⁶, Եվրոպական արտագաղթի կենտրոնը մայրցամաքի հյուսիս-արևմուտքից տեղափոխվեց հարավ-արևելք, Դրա հետևանքով 1891—1900 թթ. ընթացքում թվով 3.687.564 ներգաղթածների 51,9%-ը⁷ կազմում էին Հարավային և Արևելյան Եվրոպայի երկրներից՝ գլխավորապես Հարավային Իտալիայից, Ավստրո-Հունգարիայից և Ռուսաստանից եկածները: Աճեց նաև Չինաստանից ու Ճապոնիայից ներգաղթողների թիվը: Ի տարբերություն նախորդ տարիների ներգաղթի («հին» ներգաղթ), այս ներգաղթն ընդունված է անվանել «նոր» ներգաղթ: Ազգային կազմով «նոր» ներգաղթը խիստ խալտաբղետ էր, ներգաղթողների մեծ մասը կազմում էին տնտեսապես հետամնաց Հարավային Իտալիայի, Պորտուգալիայի, Իսպանիայի բնակիչները, բազմազգ Ավստրո-Հունգարիայի և ցարական Ռուսաստանի իրավագուրկ ազգերի ներկայացուցիչները (ուկրաինացիներ, բելոռուսներ, լեհեր, չեխեր, ֆիններ և ուրիշներ): Այդ տարիներին ԱՄՆ-ում ապաստան գտան Օսմանյան կայսրության ճնշված ազգերի ներկայացուցիչները, որոնց թվում հայերը, արաբները և այլն: Ներգաղթի ազգային կազմի այսպիսի փոփոխությունը կարճ ժամանակում իր արտահայտությունը գտավ ներգաղթային մամուլում:

«Նոր» ալիքի ներգաղթածներից շատերը հիմնականում հողագործներ էին, ինչպես նաև սնանկացած առևտրականներ ու արհեստավորներ, որոնք համալրում էին ամերիկյան բանվոր դասակարգի շարքերը: Վ. Ի. Լենինը գրել է. «Ամերիկյան կապիտալիզմը հետամնաց Արևելյան Եվրոպայի ... միլիոնավոր բանվորներին պոկում է նրանց կիսամիջնադարյան պայմաններից և ղնում պրոլետարիատի միջազգային առաջավոր բանակի շարքերը»⁸: Սոցիալ-քաղաքական իմաստով երեկվա պասսիվ գյուղացիների և արհեստավորների հասարակական ու քաղաքական ակտիվության բարձրացման պատճառները հասկանալու համար բանալի է ծառայում Վ. Ի. Լենինի այն դրույթը,

⁴ Robert E. Park, *Immigrant Press and Its Control*, New York, 1922, p. 319.

⁵ Նույն տեղում:

⁶ «The New Immigration», p. 6.

⁷ Նույն տեղում:

⁸ Վ. Ի. Լենին, *Երկեր*, 4-րդ հրատ., հ. 19, էջ 567.

որ «Առաջավոր կապիտալիզմը նրանց բռնությունը մտցնում է իր շրջապատի մեջ, նրանց դուրս է պոկում խուլ անկյուններից, նրանց դարձնում է համաշխարհային-պատմական շարժման մասնակիցներ, նրանց դնում է արդյունաբերողների միջազգային հզոր, միավորյալ դասակարգի հետ դեմ-հանդիման»⁹:

Քաղաքների քարտեզը, որտեղ լույս էին տեսնում ներգաղթածների լրագրերը, նույնանում է «նոր» ներգաղթածների տարաբնակեցման քարտեզի հետ: 1920 թ. ազգային լեզուներով հրատարակվող 1093 անուն թերթերից և ամսագրերից 480-ը լույս էին տեսնում ԱՄՆ-ի 10 առավել խոշոր քաղաքներում, որտեղ երեկվա գյուղացիներն ու արհեստավորները ձուլվում էին ամերիկյան բանվոր դասակարգի հետ:

ԱՄՆ ներգաղթողների մեծ մասը չգիտեր անգլերեն. մինչև 1914 թ. ԱՄՆ-ում բնակություն հաստատած «նոր» ներգաղթողների միայն 40,8%-ն էր այս կամ այն շահով տիրապետում անգլերենին: Հետևաբար, ամերիկյան հասարակության նոր անդամները ԱՄՆ-ի տնտեսական, քաղաքական և սոցիալական կյանքի վերաբերյալ ինֆորմացիա հիմնականում կարող էին ստանալ միայն ազգային լեզուներով լույս տեսնող լրագրերի միջոցով: Դրանով է բացատրվում այն փաստը, որ այդ շրջանի ներգաղթային մամուլում գերակշռում էին ինֆորմացիոն բնույթի նյութերը: Բնորոշ է, որ վաղ շրջանի ներգաղթային լրագրերում հիմնական տեղը զբաղեցնում էին հայտարարությունները բանվորների վարձերու, բազմաթիվ աշխատանքային բորսաների, ֆերմաների վաճառքի, ամուսնության, շոգենավային, ազգային ընկերությունների կազմակերպական գործունեության մասին, ռեկլամները, գրքային նորությունները և, վերջապես, ամերիկյան հասարակական կյանքի վերաբերյալ հայտարարությունները: Բնական է, որ այդ հրատարակությունների ինֆորմացիոն բնույթը որոշում էր ներգաղթային մամուլի պարբերականությունը: Ազգային լեզուներով լույս տեսնող օրաթերթերի թիվը գերազանցում էր շաբաթաթերթերի, ամսաթերթերի և այլ հրատարակությունների քանակը: Այդ առանձնահատկությունը մասնավորապես բնորոշ էր գծվարությամբ ձուլվող, ավելի վառ արտահայտված խմբակային համախմբվածությանը աչքի ընկնող ասիական ներգաղթածների համար: Այսպես, արաբերեն օրաթերթերի թիվը կազմում էր արաբական բոլոր հրատարակությունների 33, չինականը՝ 66, ճապոնականը՝ 75%-ը¹⁰: Ինչ վերաբերում է «հին», նշանակալի շահով արդեն ձուլված ներգաղթածներին, ապա նրանց ազգային մամուլում հիմնական բաժինը կազմում էին ամենամսյա և շաբաթական հրատարակությունները:

Հարկադրական ձուլումն ուղեկցվում էր ներգաղթածի այն ձգտմամբ, որ ոչ միայն պահպանի իր ազգային դեմքը, այլև ամուր բռնի հայրենիքի հետ կապող թելերը, մանավանդ, որ «նոր» ներգաղթածները ԱՄՆ էին գալիս ժամանակավորապես՝ փող վաստակելու մտադրությամբ: Բնական է, որ այսպիսի հոգեբանությունն ինչ-որ շահով արգելակում էր ներգաղթածների ձուլումը, նրանց մղելով հայրենիքի հետ վապերը պահպանելուն: Ներգաղթածի համար հրատապ հարց էր դառնում ոչ միայն այդ կապը, այլև իր ազգային դեմքը պահպանելը: Այդ առումով նշանակալից էր ազգային մամուլի դերը:

⁹ Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 19, էջ 565:

¹⁰ Robert E. Park, նշվ. աշխ., էջ 302:

Դա մի օղակ էր, որը ներգաղթածին մշտապես կապում էր իր հայրենիքի հետ, ազգային լրագրերից էր նա նորություններ քաղում հայրենիքի մասին: Մամուլի միջոցով նա իրեն զգում էր այն հասարակության անդամ, որի հետ նրան միացնում էին անհամար կապեր և որտեղ նա դեռ հույս ուներ վերագառնալու: Մյուս կողմից, հայտնվելով կուլտուրական նոր միջավայրում, ներգաղթածը առնչվում էր ամերիկյան և իր ազգային միջավայրի կուլտուրական ավանդույթների բախմանը: Ներգաղթածների առաջին սերունդը դրանից ելք էր որոնում իր ավանդույթների պատյանում: Դա արտահայտվում էր ազգային որոշակի կենտրոնացվածության մեջ, որը, նայած ամերիկյան իրականության մեջ այս կամ այն ազգության նկատմամբ կիրառվող խտրականության չափին, ուներ տարբեր աստիճաններ: Ազգային կենտրոնացվածության պահպանմանը նպաստող այս խտրականությունը շղարշված ձևով գոյություն ունի նաև մեր օրերում և տարածվում է ներգաղթածների երկրորդ ու երրորդ սերունդների ներկայացուցիչների վրա: Այդ փաստը հավաստում են նաև ամերիկյան սոցիոլոգները: «Հյուսիս-արևելյան գրեթե յուրաքանչյուր մեծ քաղաք ունի իր էթնիկական բնակեցվածությունը, և անդամների մեծ մասը զբաղված է ցածր վարձատրվող աշխատանքով: Էկսոգամիան շարունակում է անշաշն տոկոս կազմել: Ավելին, նրանց դեմ խտրականություն կա նաև այժմ, և այնպիսի արհամարհական մականուններ, ինչպես «dago», «wop», «kike», «hyrky» դեռևս գործածության մեջ են»¹¹, — գրում է ամերիկյան սոցիոլոգ Զ. Մեյերսը: Ամերիկյան բուրժուազիայի նման քաղաքականությունը ազգային կենտրոնացվածությունը հասցնում է սեգրեգացիայի:

Գործող ենթա-սոցիալական համակարգերի¹² ինստիտուտների գոյության փաստը վկայում է ազգային առանձնահատկությունների պահպանումը ներգաղթածների նույնիսկ երկրորդ և երրորդ սերունդների մոտ: Ազգային փոքրամասնությունների այդ համակարգերը ավանդական ներգաղթային ինստիտուտների բարդ կառուցվածքային կազմավորում են, որոնք ձևով ամերիկյանանալով, այնուամենայնիվ, ըստ էության չեն կորցրել իրենց ֆունկցիոնալ գործունեությունն այդ սոցիալական խմբերի հասարակական-քաղաքական կյանքում: ԱՄՆ-ի ազգային փոքրամասնությունների ենթա-սոցիալական համակարգի ինստիտուտների կառուցվածքի մեջ մտնում են տարբեր տեսակի կազմակերպություններ՝ բարեգործական ընկերություններից սկսած մինչև քաղաքական կազմակերպությունները. եկեղեցական համայնքներ, դպրոցներ, ինչպես նաև մամուլը, որը հրատարակվում է անգլերեն և ազգային լեզուներով:

Մնունդ առնելով որպես ինֆորմացիայի և հաղորդակցության միջոց, ներգաղթածների մամուլը, ինչպես նշվեց վերևում, միաժամանակ հանդիսացավ

¹¹ J. K. Meyers, Assimilation in Political Community („The Ethnic Factor In American Politics“. Colombus, 1970, p. 140).

¹² Կապիտալիզմի ծնունդ առնելու դարաշրջանում առաջացան Anglo-formity & Melfly-Pot դոկտրինաները, որոնք քարոզում էին բոլոր ազգերի և ազգությունների միաձուլումը մի միասնական ամերիկյան ազգի մեջ:

Այժմ ամերիկյան քաղաքագետները և սոցիոլոգները զարգացնում են XX դ. սկզբում ստեղծված այն ժխաչ թեզը, որ ներգաղթածները և նրանց երեխաները պահպանում են իրենց կուլտուրական և լեզվական առանձնահատկությունները ամերիկյան հասարակության մեջ:

նոր միջավայրին հարմարվելու մի օղակ, որն իրականացնում էր նոր եկածների կապը հայրենիքի հետ¹³։ Սակայն մամուլի դերը, որպես ինֆորմացիայի միջոցի, նվազելու պատճառով 1970 թ. ազգային լեզուներով լույս տեսնող օրաթերթերի թիվը, 1910 թ. համեմատ, կրճատվեց 76%-ով։ Այդ երևույթը, իհարկե, ուղեկցվում էր ազգային փոքրամասնությունների ամեն տեսակ տպագիր օրգանների ընդհանուր պակասեցմամբ և ենթարկվում էր համաամերիկյան մամուլի զարգացման օրինաչափություններին։ Մամուլի մոնոպոլիզացիան, որն այդ պրոցեսի համար բնորոշ հետևանքով (լրագրային ձեռնարկությունների թվի կրճատում ի հաշիվ խոշոր ձեռնարկությունների կողմից մանրերին կլանելու կամ պարզապես մահացման) ուժեղացված տեմպերով սկսվեց առաջին համաշխարհային պատերազմից հետո, հանգեցրեց լրագրային հրատարակությունների խիստ նվազեցման և շոշափեց նաև ազգային փոքրամասնությունների մամուլը։ Դրա հետևանքով իտալական, հունգարական, ռուսական ազգային համայնքներում, այսպես կոչված, «շղթա» լրագրեր ի հայտ եկան։ 1930-ական թվականներին կար հունգարական 10 լրագիր՝ մեկ միասնական ղեկավարությամբ։ Զիկագոյի «Սվոբոդնայուստ» չեխական լրագիրը վերահսկում էր 8 լրագրերից բաղկացած խումբը։ Անհետացան բազմաթիվ փոքր լրագրեր, որոնց խմբագիրները հաճախ ոչ միայն դրանց հրատարակիչներն էին, այլև գրաշարները։ Չնայած վերջին տարիներին ազգային լեզուների մասնակի ակտիվացմանը, ալյուսմանային, անգլերենն ավելի ու ավելի է դուրս մղում ազգային լեզուները։ Այսպես, օրինակ, 1960 թ. ԱՄՆ-ի բնակչության միայն 11%-ն էր (որի կեսը պատկանում էր ներգաղթյալների առաջին սերնդին) իր մայրենին համարում ոչ անգլերեն որևէ լեզու։ «Տնտեսական շրջանառության պահանջները,— նշել է Վ. Ի. Լենինը,— մշտապես կստիպեն մի պետության մեջ ապրող ազգություններին... սովորել մեծամասնության լեզուն»¹⁴։ Այդ գործոններով է պայմանավորված այն, որ վերջին տասնամյակներին ազգային փոքրամասնությունների անգլերեն լրագրերը երկրորդ պլան են մղում ոչ միայն ազգային լեզուներով լույս տեսնող, այլև երկլեզու մամուլը։

Ազգային 43 փոքրամասնությունների 903 անուն թերթերի ու ամսագրերի ընդհանուր թվից (ներառյալ հրեական մամուլը) 1970-ական թվականների սկզբում 410-ը հրատարակվում էր ազգային լեզուներով, 286-ը՝ անգլերեն և 207-ը՝ երկու լեզվով՝ ազգային և անգլերեն։ Ընդ որում՝ անգլերեն լույս տեսնող մամուլի տպաքանակը գրեթե երկու անգամ գերազանցում է ազգային լեզուներով լույս տեսնող մամուլի տպաքանակը։ Անգլերեն լույս տեսնող մամուլի տպաքանակն է 4.301.986, իսկ ազգային լեզուներով լույս տեսնող մամուլինը՝ 2.638.258, երկլեզու մամուլինը՝ 1.745.878¹⁵։

Տասնամյակների ընթացքում ազգային համայնքներում կատարվող սոցիալական տեղաշարժերը գնալով ավելի ցցուն էին դարձնում նրանցում գոյություն ունեցող դասակարգային շերտավորումը։ Ազգային փոքրամասնությունների

¹³ L. Fishman, Language Loyalty in the United States. London, 1966, p. 74.

¹⁴ Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 20, էջ 4։

¹⁵ L. K. Wynar, Encyclopedic Directory of Ethnic Newspapers and Periodicals in the United States, Littleton, 1972. p. 12.

բավականաչափ ազդեցիկ բուրժուազիայի երևան գալը և նրա շահերի միահյուսվելը համաամերիկյան բուրժուազիայի շահերի հետ, ԱՄՆ-ի քաղաքական ապարատին հնարավորություն տվեցին, հենվելով ազգային փոքրամասնությունների բուրժուա-ազգային մամուլի վրա, ձևավորել նրանց հասարակական կարծիքը: Մամուլի ազատություն ասելով բուրժուազիան հասկանում էր թերթերի հրատարակության ազատություն հարուստների համար, մամուլի զավթումը կապիտալիստների կողմից, որը գործնականում ամենուրեք բոլոր երկրներում չբացառելով նաև առավել ազատ երկրները, հանգում էր մամուլի վաճառվածության¹⁶:

Համաամերիկյանի նման ազգային փոքրամասնությունների մամուլը ևս ունի հասարակական-քաղաքական, կրոնական, կուլտուր-լուսավորական բնույթի հրատարակություններ, որոնք լույս են ընծայում տարբեր տիպի ներգաղթյալին վաղմակերպությունները: Ըստ որում, այդ վաղմակերպությունների գործունեության շրջանակը միշտ չէ, որ հստակորեն նկատելի է: Միևնույն վաղմակերպությունը կարող է լինել և՛ վրոնական-բարեգործական, և՛ կուլտուրական կենտրոն. այս կամ այն վաղմակերպության կուլտուր-լուսավորական գործունեությունը կարող է զուգակցվել քաղաքական գործունեության հետ: Այսպես, օրինակ, ներգաղթած ռուսների «Tolstoy Foundation» կազմակերպությունը, որն իրեն կուլտուր-լուսավորական կազմակերպություն է անվանում, ավելի շուտ Սովետական Միության գեմ ուղղված քաղաքական պրոպագանդա է մղում, քան հանդիսանում է կուլտուրական կենտրոն: Նույնը կարելի է ասել ուկրաինական «Schevchenko Scientific Society» ներգաղթյալին կուլտուրական կենտրոնի կամ չեխոսլովակյան «Masaryk Institute-ի» մասին, որոնք նույնպես հակասովետական գործունեություն են ծավալում:

Ազգային համայնքների գոյության հենց առաջին օրերից ԱՄՆ ներգաղթածները միմյանցից անջատված էին դասակարգային, քաղաքական շահերով և ըստ իրենց քաղաքական հսկումների՝ միավորված էին քաղաքական տարբեր կազմակերպություններում: Այդ անջատման հիման վրա տեղի էր ունենում վերը հիշատակված հասարակական և կուլտուրական կազմակերպությունների բեռնացումը, որոշակի խմբավորումը: Հաճախ քաղաքական տարաձայնությունները դառնում էին եկեղեցական համայնքների սահմանազատման պատճառ: Մասնավորապես, հայկական բուրժուա-ազգայնական «Դաշնակցություն» կուսակցության պառակտիչ քաղաքականության հետևանքով 1933 թ. տեղի ունեցավ ԱՄՆ-ում հայկական գրիգորյան եկեղեցու պառակտումը երկու թեմերի: Ըստ այդմ՝ դրանցից մեկը ճանաչում է էջմիածնի ամենայն հայոց կաթողիկոսության առաջնորդությունը, իսկ մյուսը ենթարկվում է Անթիլիասի կաթողիկոսին:

Համայնքներում քաղաքական բեռնացում տեղի է ունենում նաև այժմ՝ ԱՄՆ-ի ազգային փոքրամասնությունների հասարակական գործունեության բոլոր աստիճաններում: Ընդ որում, համայնքներում ամենաազդեցիկն են այն վաղմակերպությունները, որոնք ունեն թերթեր ու ամսագրեր հրատարակելու, համայնքի կարիքների համար փող նվիրաբերելու, ժողովներ, տոնակատարություններ կազմակերպելու ֆինանսական մեծ հնարավորություններ: Ֆինանս-

¹⁶ Վ. Ի. Լենին, երկեր, հ. 36, էջ 340:

սական աջակցություն ցույց տալով ազգային կազմակերպությունների մեծ մասին, ազգային բուրժուազիան հսկայական իշխանություն է ձեռք բերում։ Սակայն ազգային բուրժուազիան ոչ միայն ֆինանսական, այլև ազգային մամուլի նկատմամբ քաղաքական թելադրող ուժ է, քանի որ հենց ազգային կազմակերպություններն են համայնքների հրատարակած լրագրերին ու ամսագրերին ռեկլամներ պատվիրողները։

Ազգային փոքրամասնությունների մամուլը առանձնապես ակտիվորեն է մասնակցում քաղաքական բախումներին, քանի որ նրա էջերում է արտացոլվում համայնքներում տեղի ունեցող ազգային, դասակարգային և քաղաքական պայքարը։ Դա, մասնավորապես, կարելի է տեսնել այն ազգային համայնքների քաղաքական, կրոնական և կուլտուր-կրթական հրատարակությունների օրինակով, որոնց ազգակիցներն ապրում են Սովետական Միությունում և սոցիալիզմի ալլ երկրներում։ Բուրժուա-ազգայնական մամուլը, ինչպես ասվեց վերևում, լինելով ազգային փոքրամասնությունների հասարակական կարծիքի հետ մանիպուլյացիա կատարելու գործում կառավարող դասակարգի հենարանը, խաղում է այդ համայնքների սոցիալիզմի ազգային զգացմունքների հետ, միաժամանակ ատելություն է սերմանում սոցիալիզմի նկատմամբ։ Ազգային ավանդույթները պահպանելու և ներգաղթյալների երրորդ սերնդին իր ժողովրդի կուլտուր-պատմական արժեքների նկատմամբ նվիրվածության ոգով դաստիարակելու անվան տակ այդ մամուլը արմատավորում է ազգայնականություն և դրանով իսկ քաջալերում ԱՄՆ-ի կառավարող շրջանների այն քաղաքականությունը, որ նպատակ է հետապնդում պահպանել ազգային մեկուսացվածությունը և երկպառակությունը։ Դրանով է բացատրվում բուրժուա-ազգայնական հետադիմական մամուլի բազմաքանակությունն ազգային հրատարակությունների ընդհանուր թվի մեջ։ Այսպես, օրինակ, ԱՄՆ-ի լիտվական համայնքը հրատարակում է 42 անուն թերթ և ամսագիր՝ 139.239 ընդհանուր տպաքանակով։ 32 հրատարակություն լույս է տեսնում լիտվերեն, 5-ը՝ երկու լեզուներով և 5-ը՝ անգլերեն։ Լիտվական համայնքը լույս է ընծայում 3 օրաթերթ, որոնք հրատարակվում են միայն լիտվերեն՝ 47090 ընդհանուր տպաքանակով։ Այդ օրաթերթերից «Վիլնիսը» («Ալիք») հանդիսանում է «The Workers Publishing Association»¹⁷ լիտվական բանվորական առաջադիմական կազմակերպության հրատարակությունը։ ԱՄՆ-ի բելոռուսական համայնքն ունի միայն երկլեզու և անգլերեն լեզվով մամուլ՝ համապատասխանաբար 4 և 10 անուն թերթ և ամսագիր՝ 10.000 ընդհանուր տպաքանակով¹⁸։

Ռուսական համայնքը հրատարակում է 31 անուն թերթ ու ամսագիր, որից 25-ը ռուսերեն և 6-ը անգլերեն՝ 31.323 ընդհանուր տպաքանակով¹⁹։ Մեծ մասամբ դա սպիտակ ներգաղթի մամուլն է, որը զրպարտություն է տարածում ՍՍՀՄ-ի և սոցիալիստական երկրների վերաբերյալ։ Սովետական Միության ներքին և արտաքին քաղաքականության վրա կատաղի հարձակում գործելու հետ մեկտեղ այդ լրագրերը հանդես են գալիս միջազգային լարվածության թուլացման, սովետա-ամերիկյան հարաբերությունների լավացման դեմ։ Այնպիսի ռեակցիոն կազմակերպության օրգանները, փնչպիսին է «Հա-

¹⁷ L. K. W y n a r, նշվ. աշխ., էջ 224։

¹⁸ Նույն տեղում, էջ 238։

¹⁹ Նույն տեղում, էջ 242։

մառուսական միապետական ճակատը», իրենց էջերում մեծ տեղ են հատկացնում հակասովետական պրոպագանդային:

Բուրժուա-ազգայնական ռուսական-ներգաղթային մամուլի նման դիրքը նորություն չէ: Դեռևս 1921 թ. Վ. Ի. Լենինը գրել է. «Մամուլի ազատություն իրականում նշանակում է հարյուրավոր ու հազարավոր կադետական, էսէռական և մենշևիկյան գրողների գնումը միջազգային բուրժուազիայի կողմից և նրանց պրոպագանդայի, նրանց պայքարի կազմակերպումը մեր դեմ»²⁰:

ԱՄՆ-ի «Русский голос» ռուսական առաջադիմական թերթի մշտական թղթակիցներից մեկը՝ Վ. Մուրատովը, գրում է. «Նրանցից ոմանք (ռուսական ռեակցիան ԱՄՆ-ում—Մ. Տեր-Գ.) համառոտ են հավատում են, որ միապետությունը դեռևս կվերադառնա Ռուսաստան... Մյուսները մոլագարի նման դեսպոտեն են ընկնում «անկախ», «ինքնուրույն» Ուկրաինայի տիմարությամբ և այսպես անվերջ»²¹:

Շատ դեպքերում համայնքներում քաղաքական տեժերի սահմանազատումը խորացել է այն երկրներից եկած նոր ներգաղթածների հոսանքով, որտեղ տեղի են ունեցել տոցիալական և քաղաքական տեղաշարժեր: Լեհական Ժողովրդական Հանրապետության կազմավորումից հետո ԱՄՆ մեկնողները հիմնականում այն մարդիկ էին, որոնք ատելությամբ էին լցված հայրենիքում հաստատված սոցիալ-քաղաքական նոր կացութեան նկատմամբ: Տեղի ունեցավ լեհական համայնքի՝ «Պոլոնիայի», պառակտումը չափավոր-լիբերալ և ռեակցիոն թեկերի: Համայնքի ռեակցիոն թևի մամուլը ամրապնդեց իր դիրքերը՝ որպես ռեակցիայի ձայնափող:

1940—50-ական թվականներին է վերաբերում ԱՄՆ-ում լեհական բուրժուա-ազգայնական հոսանքի մի շարք հրատարակությունների առաջացումը: Դրանցից մոտ տասը իրենց գոյությունը շարունակում են նաև մինչև այսօր:

1940-ական թվականներին ուկրաինական ծագում ունեցող ներգաղթածների թիվը ԱՄՆ-ում ավելացավ (1940 թ. նրանց թիվը 35.540 էր, իսկ 1960 թ.՝ 106.974): Այս հանգամանքը մեծացրեց ռեակցիոն մամուլի տեսակարար կըշիռը ուկրաինական հրատարակությունների ընդհանուր թվի մեջ: Այժմ ԱՄՆ-ի ուկրաինական համայնքը հրատարակում է ամենամեծ թվով թերթեր ու ամսագրեր, 172.261 ընդհանուր տպաքանակով (ավելի քան 73 անուն): Հրատարակությունների մեծ մասը լույս է տեսնում ուկրաիներեն (53 անուն թերթեր և ամսագրեր), 13-ը՝ երկու լեզվով, իսկ 7-ը՝ անգլերեն: Համայնքում լույս է տեսնում երկու օրաթերթ: Բուրժուա-ազգայնական հոսանքի թերթերն ու ամսագրերը բոլոր հրատարակությունների գերակշռող մասն են կազմում:

Սակայն բուրժուա-ազգայնական մամուլը միատարր չէ: Ռեակցիոն թերթերից ու ամսագրերից բացի համայնքներում լույս է տեսնում լիբերալ ուղղության մամուլ, որի էջերում հաճախ տպագրվում են սովետական հայրենիքի իրականությունը օբյեկտիվորեն արտացոլող նյութեր: Օրինակ, ԱՄՆ-ի հայկական համայնքում դաշնակցական, իրենց ուղղությամբ հակասովետական թերթերի ու ամսագրերի կողքին գոյություն ունի հայկական «Հնչակյան» և «Ռամկավար ազատական» կուսակցական կազմակերպությունների չափավոր լիբերալ ուղղության մամուլը («Ներիտասարդ Հայաստան», «Նոր օր»):

20 Վ. Ի. Լենին, երկեր, հ. 32, էջ 654:

21 «Русский голос», 6 XII. 1973.

ԱՄՆ-ի հայկական համայնքը (ավելի քան 500.000 մարդ), լույս է ընծայում 38 անուն թերթ և ամսագիր՝ 66.757 ընդհանուր տպաքանակով: Հրատարակությունների մեծ մասը լույս է տեսնում երկու լեզվով (16 անուն), 8-ը՝ անգլերեն և 6-ը՝ հայերեն²², ինչպես հայկական, այնպես էլ ուկրաինական, ռուսական կամ լիտվական լիբերալ մամուլն ավելի ու ավելի շատ տեղ է հասկացնում ներդադրածների երրորդ սերնդի ազգային կուլտուրան, լեզուն և ավանդույթները պահպանելու պրոբլեմներին: Հաճախ տպագրվում են ինչպես կլասիկների, այնպես էլ ժամանակակից սովետական հեղինակների ստեղծագործությունները:

Ազգային փոքրամասնությունների առաջադիմական մամուլը կարևոր դեր է խաղում որպես ներգաղթածների երրորդ սերնդի դաստիարակության ինստիտուտ և մասնավորպես որպես սովետական ժողովրդի կյանքի վերաբերյալ օբյեկտիվ ինֆորմացիայի աղբյուր: Լայնորեն պրոպագանդելով սովետական հայրենիքի նվաճումները գիտության, տեխնիկայի և կուլտուրայի բնագավառներում, ազգային խմբերի առաջադիմական մամուլը ԱՄՆ ներգաղթածների երրորդ սերնդին դաստիարակում է ազգային հպարտության ու իրենց մայր հայրենիքի հանդեպ սիրո ոգով և միևնույն ժամանակ որոշակի աղդեցություն է գործում ներգաղթածների երկրորդ և երրորդ սերունդների ազգային ինքնագիտակցության ձևավորման վրա:

Ուկրաինական մամուլը լույս է ընծայում առաջադիմական ուղղության չորս հրատարակություն՝ «Українські Вісті» («Ամերիկյան ուկրաինացիների լիգա» առաջադիմական կազմակերպության օրգանը), «Карпатська Русь», «Громадський голос», «Ukrainian American», լիտվական համայնքը՝ 4 հրատարակություն («Լայսվե», «Վիլնիս», «Գեսաս», «Շվեսաս»): Հայկական համայնքը լույս է ընծայում ամենամեծ թվով առաջադիմական հրատարակություններ (10 անուն):

Հայկական առաջադիմական «Լրաբեր» թերթը հրատարակվում է 1937 թ. նյու-Յորքում, ԱՄՆ-ի հայկական առաջադիմական կազմակերպության կողմից: Լրագրերի էջերում լայնորեն լուսաբանվում է Սովետական Հայաստանի տնտեսական, քաղաքական և սոցիալական կյանքը:

Ռուսական առաջադիմական «Русский голос» լրագրի էջերում շատ տեղ է հատկացվում միջազգային քաղաքականությանը: Թերթի շուրջն է համախմբված առաջադիմական հասարակությունը: Այդ լրագիրը օգնում է իմանալու ճշմարտությունը սովետական ժողովրդի մեծագործությունների, սովետական պետության խաղաղասիրական ակտիվ քաղաքականության մասին: Լրագիրը միաժամանակ հանդես է գալիս որպես կազմակերպիչ, մասսայականացնելով ռուսական առաջադիմական ակումբների և ընկերությունների աշխատանքը: Նա օգնություն է ցույց տալիս ՍՍՀՄ տուրիստական խմբեր ուղարկելու գործին:

Եթե փորձենք լրագրերի բուրժուա-լիբերալ և առաջադիմական խմբերը միավորել այն ազդեցության հիման վրա, որ նրանք գործում են ԱՄՆ-ի ազգային փոքրամասնությունների գիտակցության վրա, ապա կարելի է ասել, որ տվյալ դեպքում մամուլը, անկախ իր քաղաքական հակվածությունից, ազգային կենտրոնացվածության պահպանման գործուն մեխանիզմներից մեկն է:

²² L. K. W y n a r, նշվ. աշխ., էջ 248:

Այժմ ազգային խմբերի ազգային կենտրոնացվածությունը առանձնապես վառ կերպով է դրսևորվում տարբեր ազգությունների ամերիկյան հասարակության մեջ հաստատվելու, ամերիկյան «մասսպայական կուլտուրային» իրենց՝ ազգային, կուլտուրան հակադրելու ձգտման մեջ: Դրա հետևանքով ազգային փոքրամասնությունների լրագրերի, մասնավորապես անգլերեն և երկու լեզվով լույս տեսնող լրագրերի էջերում ավելի ու ավելի շատ տեղ են գրավում ազգային կուլտուրային, պատմությանը վերաբերող նյութերը, ազգային գրողների ստեղծագործությունները, որոնք նախանշված են ոչ միայն ազգային տվյալ համայնքի շրջանակներում գտնվող ընթերցողների, այլև ավելի լայն հասարակության համար:

Այսօր ԱՄՆ-ի ազգային լեզուներով լույս տեսնող մամուլը, մի շարք փոփոխությունների ենթարկվելով, թեպետ դժգոհություն կրճատվել է, սակայն առաջվա նման շարունակում է նկատելի դեր խաղալ երկրի ազգային փոքրամասնությունների սոցիալ-կուլտուրական կյանքում:

ВОЗНИКНОВЕНИЕ И РАЗВИТИЕ ПРЕССЫ ЭТНИЧЕСКИХ МЕНЬШИНСТВ В США

МАРИАМ ТЕР-ГРИГОРЯН

Резюме

Одним из элементов культуры этнических групп США является этническая пресса. Сегодня 43 национальности США издают 903 названия ежедневных, еженедельных, ежемесячных изданий на 40 языках.

Возникновение этнической прессы непосредственно связано с иммиграцией, происходящей на протяжении всей истории страны. Каждая иммигрантская группа создавала на новой земле не только свои традиционные, национальные общности—разного рода национальные организации, церковные приходы, школы,—но и организовывала издание своих газет и журналов.

По мере ассимиляции иммигрантов в американском обществе функции и цели иммигрантской прессы несколько модифицировались. Если раньше главной целью прессы иммигрантов было преодоление информационного барьера, то теперь пресса является одним из средств сохранения национального лица этнических групп США. С другой стороны, очевидно превращение этнической прессы в орудие манипулирования общественным мнением и сознанием американского общества в руках у буржуазно-националистической верхушки этнических групп и американского правящего класса.